ԱՍՏԾՈ ՎՐԱ ՎԱՏԱՀ ԵՂԵՔ

Գրված է հետևյալը.

«Գաղաադի բնակիչ թեզբացի Եղիան Աքաաբին ասաց. «Կենդանի է Իսրայելի Տեր Աստվածը, Ում առջև կանգնում եմ, որ այս երեք *տարիներին ցող ու անձրև չի գալու առանց իմ խոսքի»:*

Եվ ՏԻՐՈՋ խոսքը նրան եղավ՝ ասելով.

«Այստեղից գնա՛ և՝ դեպի արևելք շրջելով՝ Քերիթ–Քերիթ վտակի մոտ թաքնվի՛ր (ուզում էի ասել), *որ Հորդանանի դիմացն է:*

Դու այդ վտակից ջուր պիտի խմես, ու ագռավներին հրամայել եմ, որ...քեզ կերակրեն»:

Նա գնաց ու ՏԻՐՈՋ ասածի պես արեց, քանի որ գնաց, Քերիթ վտակի մոտ մնաց, որ Հորդանանի դիմացն է:

Եվ ագռավներն առավոտյան նրան հաց ու միս ու երեկոյան էլ հաց ու միս էին բերում, ու նա վտակից էր խմում:

Եվ եղավ, որ որոշ ժամանակ անցնելուց հետո վտակը չորացավ, քանի որ երկրի վրա անձրև չէր գալիս:

Եվ ՏԻՐՈՋ խոսքը նրան եղավ՝ ասելով.

«Վե՛ր կաց, *սիդոնացիների Սարեփթան գնա ու այնտեղ բնակվի՛ր: Ահա այնտեղ որբևայրի մի կնոջ հրամայել եմ, որ քեզ կերակրի»:*

Եվ նա վեր կացավ, Սարեփթա գնաց ու քաղաքի դարպասներին հասնելով՝ տեսավ, որ որբևայիր մի կին փայտ է հավաքում: Ձայն տվեց նրան ու ասաց. «Խնդրում եմ, ինձ ամանով մի քիչ ջո՛ւր բեր, որ խմեմ»:

Երբ նա գնում էր բերելու, նրա հետևից կանչեց՝ ասելով. «Խնդրում եմ, ձեռքովդ մի պատառ էլ հաց բե՛ր ինձ»:

Կինն ասաց. «Քո ՏԵՐ Աստվածը կենդանի է, որ մի նկանակ անգամ չունեմ, բայց միայն կարասում մի բուռ այյուր կա, ու կուժի մեջ էլ մի քիչ յուղ կա: Ահա երկու կտոր փայտ եմ հավաքում, որպեսզի գնամ դրանից ինձ ու որդուս համար հաց թխեմ, ուտենք ու դրանից հետո մեռնենք»:

Եղիան նրան ասաց. «Մի՛ վախենա, գնա արա՛ ասածիդ պես, բայց նախ ինձ համար դրանից մի փոքրիկ նկանակ պատրաստի՛ր ու բե՛ր ինձ, իսկ քեզ ու...տղայիդ համար հետո կպատրաստես,

քանի որ Իսրայելի ՏԵՐ Աստվածն այսպես է ասում. «Կարասից այյուրը չի վերջանալու ու կուժից յուղը չի պակասելու, մինչև այն օրը, երբ ՏԵՐԸ երկրի վրա անձրև տա»:

Եվ նա գնաց ու Եղիայի ասածի պես արեց, ու նա և կինն ու իր ընտանիքը երկար ժամանակ կերան:

Կարասի այյուրը չվերջացավ ու կուժից յուղը չպակասեց՝ ըստ ՏԻՐՈՋ խոսքի, որ ասել էր Եղիայի միջոցով:

Օվկիանոսից այն կողմ գնալուց առաջ, այսօրվա զրույցի համար թեմա եմ ընտրել սրա վերաբերյալ՝ *Աստծո վրա վստահ եղեք:*

2 Իսկ այժմ, Տե՛ր, օրհնի՛ր Քո Խոսքը, երբ Այն կսկսի հնչել, և թող Սուրբ Հոգին տիրի մեր միտքն ու բանականությունը և մեզ պատրաստի Իր այցելությանը, քանզի մենք խնդրել էինք, որ Նա գա: Որովհետև մենք չենք եկել Աստծու տուն մեզ ցուցադրելու կամ ուրիշներին տեսնելու համար, այլ եկել ենք Քեզնից սովորելու, և ճանաչելու Քո Էությունը, Քո վարվելակերպը, և Քո նպատակները, որպեսզի կարողանանք դիմագրավել կյանքի խնդիրներն իրական հավաստիությամբ, Աստծո վրա վստահ լինելով: Շնորհի՛ր այդ, Տե՛ր: Մենք դա խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

3 Թերևս, այդժամ ծագեց սարսափելի առավոտը: Այնքան շոգ էր և փոշի, և մարդիկ սովի մատնված դուրս էին եկել փողոց, գետինն այնքան էր տաքացել, որ քիչ էր մնում այրվեր: Այդ ամենը նրանց մեղքերի և բարոյական քայքայման արտացոլումն էր:

4 Հասկանում եք, այդ ժամանակ Աքաաբն էր թագավորում Իսրայելում, կամ Իսրայելի վրա և նա Իսրայելի բոլոր թագավորներից ամենապիղծն էր:

Աքաաբ թագավորի պես պիղծ թագավոր երբեք չի եղել, որովհետև նա ուսուցանված լինելով և ամեն բան շատ լավ գիտենալով հանդերձ՝ հնարավորությունը բաց չէր թողնում իր արարքներով Աստծուն շարունակ բարկացնելու համար: Թեև նա հզոր ռազմական համակարգ ուներ և նրա թագավորության տարիներին երկիրը հասել էր մեծ բարգավաճման, բայց, այդուհանդերձ, անհնար է Աստծուն բարկացնել և ակնկալել, որ երկար ժամանակ անպատիժ կմնաս:

5 Եվ բացի այդ, իր ժողովրդից կին առնելու փոխարեն, նա գնաց և ամուսնացավ մի մեղավոր, կռապաշտ կնոջ հետ, միացավ կուռքերի պաշտամունքին: Նա ամուսնանում է Հեզաբելի հետ, իսկ վերջինս անհավատ էր:

6 Եվ որևէ հավատացյալ ոչ մի պարագայում չպետք է ամուսնանա անհավատի հետ: Պետք է ամուսնանալ հավատացյալի հետ:

7 Բայց Աքաաբն այս չարությունը գործեց: Կասկած անգամ լինել չի կարող, որ Հեզաբելը գեղեցիկ կին է եղել: Եվ Աքաաբը սիրահարվեց նրա արտաքին տեսքին, այլ ոչ թե էությանը: Այնքան մարդիկ են նույն սխալն անում առ այսօր:

8 Եվ նա այդ երկրում՝ ժողովրդի մեջ, տարածեց կռապաշտությունը: Եվ այդ մարդիկ, քահանաներն ու իրենց սպասավորները տվյալ հասարակության մեծ պահանջի զոհ դարձան:

9 Եվ սա ներկայումս մեր երկրի ճիշտ պատկերն է: Մենք ընկել ենք հասարակության պահանջի ազդեցության տակ: Անկասկած, քահանաները կարծում էին՝ քանի դեռ կառավարությունը դրան հավանություն է տալիս, ամեն ինչ լավ է լինելու: Սակայն ինձ համար կարևոր չէ, թե կառավարությունն ինչին է հավանություն տալիս, կարևորն այն է, թե Աստված ինչին է հավանություն տալիս: Մարդիկ կարծում էին, թե խնդիր չի լինի, եթե նրանք որոշ աշխարհիկ բաներին տրվեին:

10 Անդրադառնանք նրան, ինչ քիչ առաջ ասացի, որ սա շատ նման է մեր օրերի պատկերին: Գուցե մեզ չի թվում, որ կռապաշտ ենք, բայց այդպիսին ենք: Իսկ կառավարությունը հավանություն է տալիս դրան: Մարդիկ այսօր կռապաշտ են, որովհետև նրանք, նրանք պաշտում են կուռքերին: Նրանցից ոմանք որպես

կուռք պաշտում են կինոաստղերին, ոմանք որպես կուռք փողն են պաշտում, որոշներն էլ որպես կուռք հեռուստաաստղերին են պաշտում: Այն, ինչ հեռվացնում է Աստծուց՝ կուռք է, ինչ էլ որ այն լինի:

11 Սատանան՝ մեր հզոր հակառակորդը, այնքան խորամանկ է, որ երբեմն եկեղեցին է Աստծուց վեր դասում: Դուք կարող եք հրաշալի եկեղեցի ունենալ, կամ կեղեցուն պատկանող շինությունը հիանալի լինի, կամ այն կարող է հզոր հարանվանություն լինել: Ու նաև դա կարող է հզոր ժողով լինել, բայց ձեր սրտում թույլ մի տվեք, որ ինչ–որ բան հեռացնի Աստծուն: Այն ամենը, ինչ հեռացնում է Աստծուց, կուռք է:

12 Եվ այդ մարդիկ հասկանում էին, որ նրանք առաջվա նման հոգևորներ չեն, ինչպիսիք էին մի ժամանակ նախորդ թագավորների օրոք: Նրանք կարծում էին, միայն այն պատճառով, որ կրոնասեր ազգ են, ամեն ինչ լավ է լինելու: Եվ այդ է պատճառը, որ նման իրավիճակում մենք էլ ենք հայտնվել:

13 Մի քանի ամիս առաջ զրուցում էի իմ շատ լավ բարեկամներից մեկի հետ: Եվ նա ասաց. «Եղբա՛յր Բրանհամ, ես կարծում էմ, որ դու չափազանց շատ ես Միացյալ Նահանգները սեղմել պատին»: Նա ասաց. «Դու միշտ խոսում ես մեղքի վերաբերյալ և այն մասին, թե ինչպես է Աստված այս ազգին պատժելու»:

14 Ես ասացի. «Նա պետք է դա անի, որպեսզի Արդար մնա»:

Նա ասաց. «Բայց եղբա՛յր Բրանհամ, դու մոռանում ես, որ այս ազգը Գրքերի վրա է հիմնված եղել և մեր նախահայրերը եկել են այստեղ, և Աստված այս ժառանգությունը մեզ է տվել: Եվ մենք կրոնասեր ազգ ենք»:

15 Ես ասացի. «Այդ ամենը ճիշտ է: Եվ ոչ ոք չգիտի, թե որքան եմ ես այս ազգը գնահատում: Բայց տե՛ս, եղբա՛յրս, Իսրայելը նույնպես ընտրված էր Աստծու կողմից, և Նա իր մարգարեներին ու մեծ մարդկանց էր ուղարկում նրա մոտ: Սակայն Աստված չի կարող մեղքը հանդուրժել: Նա ստիպեց Իսրայելին, որ իրենց ամեն ցանած հատիկը հնձեն: Եվ եթե Նա այդպես վարվեց Իսրայելի հետ, այդպես է վարվելու նաև մեզ հետ: Աստծո մոտ աչառություն չկա»:

16 Մենք հասել ենք այն կետին, որ կարծում ենք, թե միայն այն պատճառով, որ մեր նախահայրերի կամ մեր եկեղեցիների հզոր հիմնադիրների նվաճումների, Աստծուն մատուցած իրենց մեծ զոհաբերությունների վրա ենք հիմնված, որը շատ լավ է և անչափ գնահատելի է, բայց մենք նրանց գործերով չենք կարող փրկություն ունենալ: Փրկությունը անձնական գործ է ամեն մարդու և Աստծո միջև: Ոչ թե մեր ազգի շնորհիվ, ոչ թե մեր եկեղեցու օգնությամբ, այլ մենք անձամբ ենք Աստծո առջև պատասխան տալու:

17 Մեր երկիրը հասել է նրան, որ երբ դիմում ես ամենաուժեղ հոգևորներից մեծամասնությանը, հոգևոր տղամարդկանց և կանանց, հայտնաբերում ես, որ նրանց սրտում ինչ-որ բան պակասում է:

18 Վերջին մի քանի շաբաթների ընթացքում ես այս թեմաներից որոշներին անդրադարձել եմ և պարզել եմ, որ կան մարդիկ, որոնց մասին կարծում էի, թե հասկացել են թեմայի բուն էությունը, մինչդեռ նրանք շեշտը դնում են ժամանակավոր բաների վրա, գնում են ամենուր և ասում. «Աստված ինձ ամենամեծ *այսինչ, այնինչ բանն է* տալիս: Աստված տալիս է...»: Դուք սխալվում եք:

19 Նյութական մեծ բարեկեցությունը միշտ չէ, որ հիմնված է Աստծո կամքի վրա: Աստված անձրև է ուղղարկում թե՛ արդարների և թե՛ մեղավորների վրա: Բայց այն, ինչի կարիքն այսօր աշխարհն ունի ճշմարիտ հավատքն է, ինչ-որ բանում ինքդ քեզ խաբել չփորձելը, դա հոգևոր անվանելով:

20 Հավատքը երբեմն մեծ հրաշքներ է գործում, բայց, այնուհանդերձ, դա հոգևոր սրտից չի բխում: Մի՞թե մեր Տերը չի ասում. «Ծատերն այն օրը կգան ինձ մոտ և կասեն, թե Քո անունով *այս* կամ *այն* բանը արեցի, և Ես նրանց հայտնապես պիտի ասեմ Ինձանից հեռո՛ւ գնացեք, դո՛ւք՝ անօրենություն գործողներ»: Ի՞նչ է անօրենությունը: Դա այն է, երբ գիտես, որ պետք է անես, և չես անում. «Ես երբեք ձեզ չեմ ճանաչել»,— կասի Նա: Եվ մենք հիմա ապրում ենք այդ օրում:

21 Այն, ինչի կարիքը մենք ունենք այսօր, նյութականի առատությունը չէ, մենք դա ունենք: Մեզ ավելի մեծ եկեղեցիներ հարկավոր չեն: Մեզ ավելի շատ ժողովներ հարկավոր չեն: Մեզ ռադիոյով և հեռուսատատեսությամբ ավելի շատ հաղորդումներ հարկավոր չեն: Մեզ նման այնքան շատ բաներ հարկավոր չեն: Բայց այն, ինչի

կարիքը մենք ունենք այսօր հոգևոր լինելու համար՝ Աստծո առջև խոնարհ լինելն է: Եթե նրանք անգամ մի լումա չունեն, աղոթք են անելու այնքան, մինչև իրենց ներսում եղող հոգին բավարարվի Աստծո բարությամբ, և արթնություն տեղի ունենա իրենց սրտում, որը փոխելու է թե իրենց վերաբերմունքը և թե մթնոլորտը, որտեղ ապրում են:

22 Կարող է ոտքերիդ կոշիկներ չլինեն, կարող է ցնցոտիներ հագած լինես, բայց քո սրտում ինչ–որ բան երգում է Աստծո մեղեդիները: Ավելի լավ է դա ունենամ, քան աշխարհի բոլոր փողերը:

23 Դրա համար միշտ չէ, որ կարելի է ասել, թե բնական բաներն Աստծո օրհնության նշանն է հանդիսանում: Դավիթը Տիրոջն ասում է այդ մասին, որ նա տեսել է, թե ինչպես է անիրավն արմատ գցում...հսկայական բազմաճյուղ ծառի պես: Սակայն Աստված հարց տվեց նրան. «Դու երբևէ տեսե՞լ ես նրան վերջում»: Կարևոր չէ, թե ինչ լավ հանդերձանք ենք կրում, թե ինչքան սնունդ ունենք, դա այն չէ, ինչ գնալու է Աստծո ներկայության մեջ: Այս մարմինը, որում բնակվում ենք, մեռնելու է, անկախ նրանից, թե ինչպես է հոգ տարվել նրա մասին: Կարևորը՝ մարդու մեջ եղող հոգին է: Կարևորը՝ հոգու վիճակն է, որը գնում է կենդանի Աստծո ներկայության մեջ:

24 Բայց մենք ամեն ինչ ընդունում ենք որպես վերևից պարտադրված: Մենք կարծում ենք, թե միայն այն բանի համար, որ ազգ ենք...Այդպես էլ այդ օրը Աքաաբն ու ամբողջ Իսրայելը ամենն ընդունեցին որպես վերևից պարտադրված: Իրենց քահանաներն ու քարոզիչները փորձում էին նրանց ասել. «Ամեն ինչ լավ է: Ամեն ինչ ուղղակի հիանալի է»: Բայց նրանք ունեին մեկը, նա սխալ բաներին դեմ էր դուրս գալիս, որովհետև այդ մեկը գիտեր, որ Սուրբ Աստծուն չես կարող գոհացնել անսուրբ կրոնի ժամանակակից ուղղություններով:

25 Այդպիսին է երկնային Հայրը մնում նաև այսօր: Չնայած մեր բոլոր ջանքերին և մասշտաբներին, որոնք մենք փորձում ենք ընդգրկել, Աստված երբեք չի գոհանա, կյանքն անմնացորդ Իր առջև ընծայելուց բացի:

26 Մենք կարող ենք դպրոցներ, սրբավայրեր, աղոթատներ կառուցել, կարող ենք կազմակերպություններ ստեղծել, կարող ենք մեծ գործեր անել, բայց, այնուհանդերձ, Աստված չի գոհանա, մինչև

մարդու հոգին չսրբանա Աստծո զոհասեղանի վրա՝ Աստծո գործերի համար ընծայված: Իսկ դու արդեն դա չես նկատում:

27 Դու նկատում ես, որ մեր աղոթաժողովները շատ են թուլացել, մոտ մեկ րոպե աղոթք և թռիչք անկողնու մեջ: Մենք նկատում ենք, որ դա օրվա ընթացքում մոտ մեկ կամ երկու անգամ է տեղի ունենում: Այն ինչ մենք բոլորս էլ մեղավոր ենք: Բարոյապես մեր ազգը քայքայվում է: Մենք ամենուր Բիլլի Գրեհեմ և Օրալ Ռոբերտսներ ունենք: Բայց մինչև Ամերիկայի սրտում փափագ առաջ չգա կրկին կենդանի Աստծուն վերադառնալու համար, կենդանի փորձառության, անմահ հավատքի առ կենդանի Աստծուն, մենք, այսպես ասած, զուր ենք մեր ուղեղին զոռ տալիս:

28 Գուցե մենք մեր դռշը տնկած, ետևից կոճկվող մանյակը կապած քայլում ենք փողոցով և կամենում ենք, որ մեզ «Դոկտոր», կամ «Պատվելի» անվանեն: Գուցե մենք քաղաքի ամենամեծ եկեղեցու հովիվն ենք, և գուցե այնքան բարեպաշտ ենք, ինչքան կարող ենք, որ ոչ ոք չի կարող մատնացույց անել մեր կյանքին, Բայց քանի դեռ մեր մեջ եղող հոգին չի վառվում Աստծո համար, քանի դեռ չենք փափագում Նրան...«Ինչպես եղջերուն ջրի վտակներին է փափագում, այնպես էլ իմ անձը Քեզ է փափագում, ո՛վ Աստված»: Մինչև չհասնենք նման փորձառության:

29 Դրա համար կոմունիզմը և այլն շարունակելու են զորանալ, ինչպես դա անում են հիմա, և այլ բոլոր միությունները, որոնք մենք կարող ենք ստեղծել, չեն կարողանալու դա կանգնեցնել: Կանխասված է, որ նա գալու է: Բայց Աստված դիմում է Իր Եկեղեցուն:

30 Ինչպե՜ս այդ աննկատ կինը պետք է համապատասխաներ Եղիայի ձևաչափին: Որովհետև սովորաբար քո գործողությունները ցույց են տալիս, թե ով ես դու: Եվ կրկին, այդ կինը ընտրված էր Աստծո մարգարեին հյուրընկալելու: Հիշե՛ք, նա հեթանոսուհի էր, ոչ թե հրեուհի:

31 Եվ այդ երկիրը չորանում էր: Եվ, անկասկած, այդ աննկատ կինը նման ձևաչափի լինելով, այդ տեսակի հոգևոր լինելով...Որովհետև մենք հասկանում ենք, որ Աստված չէր դիմի այդ կնոջը, եթե նա արժանի չլիներ Աստծո մարգարեին հյուրընկալելու համար: Որովհետև

Նա Իր մարգարեին երբեք չէր ուղարկի անարժան մի տուն:

32 Սա ոչ թե նրա ընտրությունն էր, այլ Աստծո: Այդ կինը չէր կանչել նրան, Աստված էր կանչել նրան: Նա տեղափոխվեց առվակի մոտ: Ագռավները կերակրում էին նրան: Բայց դա Աստծո հրամանն էր, որ ինչ-որ բան պետք է կատարվեր: Եվ Աստված, անշուշտ, գնաց մի հավատացյալի մոտ, ով ուներ նույն բնույթը, ինչ Եղիան:

33 Նա որբևայրի կին էր: Եվ մենք բոլորս գիտենք, թե ինչ կարող էր նա վերապրել՝ ունենալով մահացած ամուսին և մանկահասակ որդու դաստիարակությունը վրան,

34 իսկ այդ երկրում, նրանց ապրուստը կախված էր բերքից: Նրանք չունեին այնպիսի ձրագրեր, ինչպիսին մենք ունենք այսօր, և, և բույսերը պաշտպանելու միջոցներ: Նրանց ապրելը կախված էր բերքից: Եվ մարդկանց անօրենության և բարոյական քայքայման պատճառով երաշտ է բերվում այդ երկրի վրա, և ահա նրանք բոլորը սովամահ էին լինում և մահանում:

35 Իսկ հետո մենք պարզում ենք, որ այդ կինը, անկասկած, ամեն գիշեր, ամբողջ գիշեր աղոթում էր, երբ սկսեց նկատել, որ կարասում այլուրը գնալով պակասում, պակասում, պակասում է: Եվ հասել էր այն բանին, որ մի բաժակի չափ այլուր չէր մնացել կարասում: Այն ամենը ինչ նա ուներ, մի բուռ այլուր էր: Մահը թակում էր դուռը, դռան շեմին էր, որովհետև ոչ մի տեղից չէր կարող էլի վերցնել: Ամբողջ ազգը սովից մահանում էր:

36 Իսկ յուղը...փոքրիկ կուժի մեջ մի գդալի չափով յուղ էր մնացել: Ահա թե որքան յուղ ու այլուր էր բաժանում նրան մահից: Նա պետք է որ շատ անկեղծ լիներ իր աղոթքներում: Եթե ինչ-որ նման բան դիպչի ընտանիքիդ, ավելի շատ անկեղծություն կլինի, քան մենք ունենք այսօր առավոտյան, երբ գիտենք, որ մահը դռան շեմին է:

37 Եվ կարծում եմ, հավանաբար, մենք գուցե մտածեինք, որ նա ամբողջ գիշերվա ընթացքում աղոթել է, որովհետև հաջորդ օրը վերջինն էր լինելու: Նա կարող էր հայացք նետել իր գուցե երեք կամ չորս տարեկան փոքրիկ տղայի գունատ շուրթերին: Եվ տեսնում էր, որ իր սեփական ոսկորները չորանում են իր հյուծվող մարմնի հետ միասին: Եվ դա պետք է որ ահավոր բան լիներ մոր համար՝ տեսնելով այս ամենը: Մինչդեռ նա իր ձեռքերը

դեպի Աստված պարզած գիշեր–ցերեկ աղոթում էր. «Հիմա մեզ մնաց մի բուռ այլուր և մի գդալ յուղ»:

38 Գիտե՞ք, սա տարօրինակ բան է: Աստված տա, որպեսզի սա խորապես թափանցի ձեզանից յուրաքանչյուրի սիրտը, եթե էլ չլսեք իմ քարոզը: Թող սա առանցքային պահ լինի: Տարօրինակ է, ամենատարօրինակն այն է, որ Աստված երբեմն ամեն ինչ այդպես է անում:

39 Դուք գիտեք, որ երբ մենք խոստովանում ենք մեր մեղքերը և կատարում ենք Աստծո ներկայացրած ամեն պահանջը…Մենք հավատացել ենք Աստծուն: Մեր կյանքում պարագաներ են լինում, որոնց մենք պետք է բախվենք, և դա Աստծո կանքի համաձայն է տեղի ունենում: Եվ մենք խոստովանում ենք մեր մեղքերը, սխալները կարգի ենք բերում, անում ենք ամենը, ինչը մենք գիտենք, թե ինչպես անել: Յուրաքանչյուր պահանջ կամ խնդրանք, որ Աստված ներկայացրել է, կատարել ենք, բայց, այնուամենայնիվ Նա լուռ է մնում: Նա պարզապես մեզ չի պատասխանում:

40 Ես համոզված եմ, որ այս առավոտ այն մարդանց եմ դիմում, ովքեր հայտնվել եմ նման իրավիճակում: Ես ինքս բազում անգամներ հայտնվել եմ նման իրավիճակում: Երբ հետ եմ նայել և քննել եմ իմ կյանքը, տակնուվրա եմ արել և պարզել, որ ինչ–որ բան սխալ եմ արել, ես խոստովանել եմ այն և ասել. «Տե՛ր Աստված, ես դա կարգի կբերեմ», և գնացել եմ, որպեսզի այդպես անեմ: Այնուհետև նորից վերադարձել և ասել եմ. «Այժմ Տե՛ր, Դու Աստված ես. Պատասխանիր ինձ: Անշուշտ, ինձանից պահանջվող յուրաքանչյուր պահանջը ես կատարել եմ: Եվ ամեն պահանջը կատարել եմ.»: Մինչդեռ Նա մնում է անշարժ, կարծես լուռ նստած է, ահա թե երբ է պետք վստահ լինել, որ Նա Աստված է: Մի՛ հուսահատվեք: Միակ բանն այն է, որ ձեր սրտում վստահ լինեք Աստծո վրա:

41 Իմ նյութն է: Համոզված եղի՛ր, առաջին հերթին՝ նախքան մի բան անելը: Համոզված եղի՛ր քո սրտում, որ դա Աստված է: Եվ այն ժամանակ, երբ Նրա ամեն ասածն անես, այդժամ դու կհամոզվես, որ Նա Աստված է, ահա թե երբ է հավատքը գործելու է, հենց այդ ժամանակ: Հավատը մնում է հաստատուն, որովհետև գիտի, որ Նա կա:

42 Եվ դու յուրաքանչյուր պահանջ կատարել ես: Դու հավատում ես, որ Նա կա, և հավատքը մնում է հաստատուն: Օ՜հ, օրհնյալ լինի Նրա Անունը: Հավատքը

չի տատանվելու, որովհետև վստահ է, որ Աստված կա, և վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին:

43 Թող սա խորապես թափանցի և երբեք դուրս չգա ձեր միջից, Բրանհամի Խորհան: Եթե դուք կատարել եք Աստծո պահանջները, և ձեր սրտում հավատում եք, որ Նա կա, Աստված պարզապես փորձության է ձեր հավատքը, որովհետև Նա սիրում է դա անել: Դուք խոստովանել եք ձեր մեղքերը և Աստծո ներկայացրած յուրաքանչյուր պահանջ կատարել եք, իսկ Նա շարունակում է լուռ մնալ, հիշե՛ք, հավատքը վկայելու է, որ Նա կա: Հետո, հավատքը կառչում է դրանից, չգիտենալով, թե ինչու է արվում այս ամենը, բայց գիտի, որ Նա կա, և վստահ է, որ Նա գոյություն ունի:

44 Այդ դեպքում հիշե՛ք, եթե Նա գոյություն ունի, ապա Նրա Խոսքերը պետք է ճշմարիտ լինեն: Եվ եթե Նա հարկ է համարում, որ դուք անցնեք այս հանգամանքների միջով, և անցնում եք, Նա պարտավոր է հոգ տանել Իր Խոսքի մասին: Հետ մի՛ նահանջեք և մի՛ ասեք. «Դե, ես այդպես էլ չբուժվեցի: Ես...»: Օ՛հ, դու խեղճ, թերահավատ մարդ: Մի՛ հավատա դրան: Եթե ամեն բան խոստովանված և ամեն բան կարգի է բերված, և դու կատարել ես Աստծո պահաջները, հավատքը հենց այդտեղ է: Ոչինչ չի սասանի այն: Նա կա, և դու վստահ ես դրանում: «Նրանք, ովքեր Տիրոջն են ապավինում, պիտի նորոգեն իրենց ուժերը, արծիվների պես թևերով վեր պիտի սլանան, պիտի վազեն ու չպիտի հոգնեն, պիտի քայլեն ու չպիտի նվաղեն»:

45 Սպասի՛ր մինչ այն ժամանակ, երբ կկատարես Նրա պահանջը: Ահա թե ինչն է դրսևորելու քո հավատքը: Եթե կատարել ես...Աստծո պահանջները կատարվել կամ բավարարվել են, և դու ամբողջությամբ դա քննել ես, և ամենը, ինչ Աստված պահանջում է քեզանից, կատարել ես, այդժամ քո հավատքը հենվում է այն բանի վրա, որ Նա կա: Վստահի՛ր Աստծուն:

46 Դուք գիտեք, Նա սիրում է մեզ փորձության ենթարկել: Սիրում է մեր հավատքի արձագանքը տեսնել: Դուք դա գիտեի՞ք: Աստծուն դուր է գալիս տեսնել, թե ինչպես ես արձագանքելու: Երբ դու կասես. «Ո՛վ Տեր, ես հավատում եմ Քեզ: Դու ես իմ Փրկիչը: Հավատում եմ, որ Դու ես Բուժողը: Հավատում եմ, որ Դու ես այն Միակը, Ով տալիս է Սուրբ Հոգին: Եվ այն բաները, որոնք ես խնդրում եմ, դրանք շնորհող Աստվածը Դու ես»: Եվ այն ժամանակ, երբ դու քո բոլոր մեղքերը խոստովանում ես և ուխտ

ես անում Աստծո առջև, թե ինչ ես անելու, եթե Նա քեզ առողջ դարձնի, իսկ հետո, երբ դա տեղի չի ունենում, վախկոտի պես փախչում ես: Աստված չի կարող դա գործի դնել: Նրա համար միջոց չկա քեզ գործի դնելու: Հնար չկա Նրա համար քեզ պատասխանանելու, որովհետև Նա միայն հավատքի միջոցով է պատասխանում: Այնուհետև, հանկարծակի դու հեռանում ես, և Նա չի կարողանում պատասխանել: Սակայն իսկական, ճշմարիտ հավատքը կանգնում է այնտեղ, համոզված լինելով, որ Աստված կա: Վստահ եղե՛ք, որ Նա կա:

47 Եվ եթե Աստված խնդրում է այս բանն անել, այն է՝ խոստովանել քո մեղքերը և այլն, և դու դա արել ես, հավատքն ասում է, որ Նա գոյություն ունի, համոզված է, որ դա կատարվելու է: Խնդրանքդ պետք է շնորհվի: Օ՜հ, ես, ես հուսով եմ, որ դուք դա բաց չեք թողնի: Եթե դու վստահ ես Աստծո վրա, Աստված էլ վստահ է Իր Խոսքի վրա: Նա պարզապես սպասում է քեզ փորձելու համար:

Բազում անգամներ է Նա արել դա: Եկեք մեկ կամ երկու դեպք դիտարկենք:

48 Եկե՛ք մտածենք հրեա երեխաների մասին: Նրանց արգելված էր երկրպագություն անել կուռքին: Աստված վստահում էր նրանց և երբ նրանք լսեցին, որ կրակի հնոցն են նետվելու, ասացին. «Մեր Աստվածը մեզ կարող է փրկել այս հնոցից: Բայց եթե Նա դա չանի էլ, մենք ձեր ոչ մի կուռքերին երկրպակություն չենք անելու»: Տեսնում եք, նրանք վսահություն և համոզվածություն ունեին Աստծո վրա:

49 Նրանք գիտեին, որ Նա է Եհովան: Գիտեին, որ Նա պատասխանում է աղոթքներին: Բայց արդյոք Նա անելու է դա իրենց դեպքում թե՞ ոչ, դա բարուն գործակից է լինելու: Դրա համար նրանք պարզապես արեցին իրենց հայտարարությունը, խոստովանեցին իրենց մեղքերը և գնացին մահվան:

50 Դեպի կրակի հնոցը քայլելիս, նրանք գիտակցում էին, որ համոզված են այն բանում, եթե անգամ Աստված թույլ տա նրանց այրվել, հարության օրը Նա դարձյալ հարություն կտա իրենց: Նրանք վստահ էին Աստծո վրա, որովհետև գիտեին, որ Աստված ամեն բան բարուն գործակից է անում իրենց համար: Եվ երբ մենք վստահում ենք Աստծուն, գիտենք, որ Նա ամեն բան բարուն գործակից է անում:

51 Եվ այսպես, նրանք մի հայտարարություն արեցին։
Նրանք վստահ էին, և նրանք գնացին ուղիղ կրակի հնոցի
մեջ։ Եվ Աստված թույլ տվեց, որպեսզի նրանք գնան
այնտեղ. անշարժ հետևում էր նրանց։ Նա ուզում էր
տեսնել նրանց արձագանքը։

52 Երբ թագավորն ասաց. «Երբ լսեցիք փողի ձայնը,
երկրպակություն արեցի՞ք»։

Նրանք ասացին. «Ոչ։ Մենք երկրպարգություն
չենք արել»։ Ահա թե որտեղ է ձեր հավատքը մնում
հաստատուն։

«Դե, այդ դեպքում, եթե երկրպագություն չեք արել,
ձեզ հայտնի է իմ հրամանը»։

«Այո։ Մենք գիտենք այդ մասին»։

«Իմ հրամանը հետևյալն է՝ հնոցը սովորականից
յոթնապատիկ ավելի ուժգին է վառվելու, և ես ձեզ գցելու
եմ այնտեղ։ Այժմ ուզո՞ւմ եք երկրպագություն անել»։

«Ոչ։ Մենք երկրպագություն չենք անելու»։ Այ դա
իրենց հավատքն էր։

53 Աստված ասում է. «Լավ, տեսնեմ, ի՞նչ են անելու
սրա հետ։ Տեսնեմ, թե ինչ արձագանք է ունենալու իրենց
հավատքը»։

54 Եվ այսպես, նա ասաց. «Կապե՛ք նրանց ձեռքերն
ու ոտքերը և բերե՛ք դեպի հնոց»։ Նրանք մոտենում
էին հնոցին, նայելով կրակին։ Աստված շարունակում էր
կանգնած մնալ, հետևելով այդ տեսարանին։ Սակայն
նրանք վստահ էին, որ Նա Աստված է։ Նրանք իրենց
հավատքը դավանել էին։ Նրանք ամեն ինչ արեցին ճիշտ
այնպես, ինչպես գիտեին։ Նրանք վստահ էին, որ Նա
Աստված է։

55 Եվ այսպես, նրանք քայլում էին ուղիղ դեպի այդ կրակի
հնոցը։ Հենց այդ վերջին րոպեին Նա քամու կառքին
նստած սլանում է երկնքից, հովհարելով նրանց կրակե
լեզուներից, մինչդեռ մխիթարում և զրուցում էր նրանց
հետ։

56 Աստված թույլ է տալիս, որ ձեր հավատքը հասնի այն
կետին, որտեղ այն կարձագանքի։

57 Հին Կտակարանում կար Հոբը։ Երբ սատանան՝ մեր
մեղադրիչը մեղադրում էր նրան այն բանում, որ նա
գաղտնի մեղավոր է։ Սակայն Հոբը գիտեր, որ ինքը
մեղք չի գործել։ Նա գիտեր, որ ամեն բան, ինչ որ արել

էր, խոստովանել ու ողջակեզ էր մատուցել այնտեղ: Դա Աստծո պահանջն էր: Դա էր այն ամենը, ինչ Աստված պահանջում էր՝ ողջակեզն ու խոստովանությունը: Իսկ Հոբն այդ ամենն արել էր:

58 Եվ Սատանան ասաց. «Ես կխլեմ նրանից իր ուղտերը, որովհետև նա հարուստ մարդ է: Ես կխլեմ նրա ոչխարները»: Ի վերջո, նա խլեց նրա երեխաներին, սրտին մոտ ամենաթանկ բանը:

59 Մինչդեռ Հոբն իր դիրքը չէր փոխում, որովհետև նա գիտեր Աստծուն, վստահ էր, որ Նա Աստված է, որովհետև Նրա հետ խոսել էր, և նա կատարել էր Նրա պահանջները: Նա ամեն բան քննեց և պարզեց. «Ես բոլոր ողջակեզները մատուցել եմ: Ես իր սրիտում ասել եմ. «Երբ տղաներս խնջույք են արել և դուստրերս եկել են, գուգե իրենց սրտում թաքուն մեղք են գործել, դրա համար ես ողջակեզներ կմատուցեմ նրանց փոխարեն և կխոստովանեմ իրենց սխալը»»:

60 Ո՛վ Աստված: Երբ մարդն Աստծո ասածը պահում է, վստահ է, որ Նա Աստված է, Նա պետք է պատասխանի: Հավատքը Նրան ասպարեզ է կանչում, ամեն անգամ:

61 Երբ դու արել ես այն ամենը, ինչ գիտես, որ ճիշտ է, երբ կատարել ես Նրա պահանջները, երբ խոստովանել և ամեն բան կարգի ես բերել, և վնասը հատուցել, և բերել ես դա Աստծո առջև: Ինձ համար կարևոր չէ, թե որքան լուռ է մնում Նա, Նա դեռ Աստված է, Ով սպասում է այնտեղ հավատքը ներդնելու համար: Դու քո գործերը կատարել ես, այժմ Նա ուզում է տեսնել հավատքդ ըստ քո գործերի: Ուզում է տեսնել, թե ինչ ես անելու:

62 Եթե քեզ յուղով օծեն և աղոթք անեն քո համար, Աստված սպասում է, թե ինչպես ես դրան հավատալու: Մի՛ վազիր հետևյալ կիրակի, մի՛ վազիր հաջորդ օրը քաղաք եկած մյուս բուժող եկվորի մոտ: Նա սպասում է տեսնելու քո արձագանքը հավատքիդ համաձայն: Մի՛ արի հաջորդ օրը և ասա. «Ես ինձ այնքան վատ եմ զգում, չեմ կարծում, որ բուժվել եմ»: Նախ դու անելիք չունես աղոթքի շարքում: Անելիք չունես: Չունես անելիք: Դու դեռ պատրաստ չես: Դու չես հավատում, որ Նա Աստված է: Ես չ...

63 Դու կարող ես ասել. «Եղբա՛յր Բրանհամ, ես համաձայն չեմ քեզ հետ: Քո գործողություններն ապացուցում են, թե ով ես դու: «Իրենց պտուղներից կճանաչե՛ք նրանց»: Եթե մի մարդ ասում է, որ քրիստոնյա

է և դեռ շարունակում է խմել, ծխել, մոլախաղերով զբաղվել, անվայելուչ կատակներ պատմել և ասել. «Աստվածաշնչի մի մասը ճիշտ է, իսկ մի մասը՝ ոչ»,— նա կարող է Ավետարան քարոզել և Աստվածաշնչի մի մասը հերքել, նա շարունակում է մեղավոր մնալ: Նա դեռ չի շտկվել:

64 Բայց, երբ դու բացահայտ դավանում ես, որ Աստված նույն Աստված է, և քո կյանքդ հանձնած է Նրա ձեռքերի մեջ ինչպես՝ «Տե՛ր, ես կավն եմ. Դու՝ Բրուտը», այդ դեպքում խնդրիր, ինչ ուզում ես: Հավատքը երբեք չի սասանվի: Այն կմնա իր տեղում:

65 Թեև պարագաները կարծես տարափի պես տեղում են քո գլխին, բայց այդ հավատը երբեք չի սասանվի, որովհետև դու վստահ ես, որ Նա Աստված է: Իսկ եթե Նա Աստված է, Նա Իր խոստումը պահում է: Նա չի կարող տալ խոստում և հետո դրժել այն: Եթե Նա Աստված է, Նա պետք է պահի Իր խոստումը: Օ՜հ, ես սիրում եմ դա: Նա պետք է պահի այն:

66 Հոբն իր զոհաբերությունները մատուցել էր, նա ամեն բան արել էր: Նա գիտեր, որ ինքը ճիշտ է: Եվ ահա հայտնվում են եկեղեցու անդամներ, մյուս կազմակերպություններից, ինչ-որ եկեղեցիներից, ասում. «Հո՜բ, դու պետք է նաև խոստովանես, որ դու մեղավոր մարդ ես, որովհետև եթե մեղավոր չլինեիր Աստված թույլ չէր տա, որ նման ձևով պատժվեիր»:

67 Սակայն Հոբն ասաց. «Ես իմ հավատքը դավանել եմ: Ես ողջակեզը մատուցել եմ Աստծո առջև, և ես մեղավոր չեմ»: Նա գիտեր, թե որտեղ է ինքը կանգնած: Այնուհետև ամեն ինչ ընթացավ, ծավալվեց և ծավալվեց, արագ-արագ, փորցելով կոտրել Հոբին և հասցնել նրան այն վիճակին, որտեղ նա կուրանար թե Աստծուն, և թե այդ ողջակեզը: Հենց այն րոպեին, երբ սկսում ես գործել հիմնվելով հավատքիդ դավանության վրա, դա ցույց է տալիս քո թույլությունը, քո կասկածամտությունը Աստծո նկատմամբ: Դու Աստծուց ինչ-որ բան ես խնդրում, և քայլում եք ամենուրեք կասկածի տակ դնելով այն, ուրեմն դու կասկածամիտ ես, այլ ոչ թե հավատացյալ:

68 Հոբը գիտեր, թե որտեղ է ինքը կանգնած և նա ամուր կանգնած էր այդ հիմքի վրա:

69 Զարմանալի չէ, որ Պերրոնեթն իր մահվան ժամին ասել է.

Ես կանգնած եմ Քրիստոսի Վեմի վրա,
Բոլոր մյուս հիմքերն խորտակվող ավազ
են:

70 Հոբի նման ամուր ժայռի դավանության վրա անգամ իր սիրելի կինը հեռացավ: Այն ժամանակ, երբ նրա առողջությունը քայքայվել էր, և նրա մարմինը գլխից մինչև ոտքի թաթը պատված էր պալարներով, և նա ինքն իրեն քորում էր և անիծեց իր ծնված օրը, ասաց. «Ավելի լավ է արևը չշողար. Ավելի լավ է Լուսինը չհայտնվեր գիշերը»:

Նրա կինն ասաց. «Հո՛բ, դու այնքան ողորմելի ես: Ինչո՞ւ չես անիծում Աստծուն ու հետո մեռնում»:

71 Հոբն ասաց. «Մի անմիտ կնոջ պես ես խոսում»: Նա վստահ էր, որ Աստված կա, և նա պահանջները կատարել էր: Օ՛հ, ես ինձ կրոնավոր եմ զգում: Նա գիտեր, որ ինքը կատարել է Աստծո պահանջները, և դա կարգավորում էր ամեն բան: Աստված փորձում էր նրա հավատքը: Նա փորձելու է ձերը, փորձելու է իմը:

72 Բայց այն ժամանակ, երբ մենք կատարել ենք Նրա պահանջները՝ «Թող ձեզանից ամեն մեկը ապաշխարի և մկրտվի՝ Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և դուք կստանաք Սուրբ Հոգու պարգևը»,— ահա Նրա խոստումը: «Եթե ձեզանից մեկը հիվանդ է, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրանք թող յուղով օծեն նրան և աղոթեն նրա համար: Հավատով արված աղոթքը պիտի փրկի հիվանդներին, ու Տերը նրանց պիտի ոտքի կանգնեցնի»: Դա կարգավորում է ամեն բան: «Խոստովանե՛ք ձեր հանցանքները միմյանց և միմյանց համար աղոթեցե՛ք»: Դուք կատարել եք Տիրոջ պահանջները:

73 «Այս նշանները պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են՝ Իմ անունով դևեր պիտի հանեն. և նրանք նոր լեզուներով պիտի խոսեն. եթե օձեր բռնեն կամ մահացու թույն խմեն, նրանց չպիտի վնասի: Եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք պիտի առողջանան»: Դա կարգավորում է ամեն բան:

74 Աստծո վրա վստահ եղե՛ք: Վստահ եղե՛ք ձեր սրտում, որ հավատում եք, թե դա Աստծո Խոսքն է: Հոբն այդպիսին էր:

Նրա կինն ասաց. «Ինչո՞ւ չես անիծում Նրան և դրանից հետո մեռնում: Չէ որ քո դրությունը գնալով վատանում

է»:

75 Ինչքան է Սատանային դուր գալիս նման բան գցել ձեր վրա: Դու քեզ ավելի լավ չես զգում, քան երբ քեզ յուղով օծեցին: Դու ավելի լավ չես զգում քեզ, քան երբ այդ քարոզիչները աղոթեցին քեզ համար: Նախ և առաջ նրանց քարոզիչները ճիշտ չեն: Կարևոր չէ, թե այդ քարոզիչն ինչպիսին է: Դա ձեր հավատքն է առ կենդանի Աստծված, որ բարձրանում է: Ոչ թե այն բանից, թե ինչպիսին է քարոզիչը. այլ թե ինչպիսին է Աստված: Քարոզիչը չի տվել խոստումը, Աստված է տվել խոստումը: Ոչ թե քարոզչի հնարավորությունները. այլ Աստծո հնարավորությունները և քո հավատը հավատալու համար, որ դա Աստված է: Դրա համար Աստծո վրա վստահ եղեք: Վստահ եղեք, որ սա Աստված է, և սա Աստծո Խոսքն է: Իսկ Աստված Իր Խոսքի մեջ է գտնվում:

76 Եվ Հոբն ասաց. «Դու մի անմիտ կնոջ պես ես խոսում»: Ասաց. «Տերը տվեց ու Տերը վերցրեց, թող օրհնյալ լինի Տիրոջ անունը»: Նա վստահ էր, որ Աստված կա:

77 Այդ խոսքերն ասելիս որոտները սկսեցին թնդալ, կայծակները փայլատակել: Աստված դուրս եկավ ասպարեզ: Դա Իրեն միշտ կանչում է ասպարեզ: Նա երկար ժամանակ էր լուռ նստել:

78 Ահա թե ինչ է Նա անում: Նայե՛ք դեպի դժոխք գնացող այս ամերիկացիների խմբին, եկեղեցու կեղծավոր մշտական հաճախորդներին: Ես չեմ բարկանում: Սակայն մեղքը Աստծո առջև ուղիղ եղող ցանկացած մարդուն է բարկացնում: Ես չեմ բարկանում այս ազգի, չեմ բարկանում այս մարդկանց վրա, այլ ես բարկանում եմ այն դևի վրա, ով առաջացնում է այս բաները մարդկանց կուրացնելու համար:

79 Այս կույր հովիվներն ու քարոզիչները նրանց տալիս են անպատժելիության զգացողություն՝ իրենց փոքրիկ մարդկային աստվածաբանության միջոցով: Պետք է վերստին ծնվել: Եվ Աստված պահում է Իր Խոսքը: Տեսե՛ք, թե ինչպես է նա իրենց գլխի տակ փափուկ բարձ դնում: Ավելի լավ է վստահ լինել, որ Աստված կա: «Աստվածպաշտության կերպարանքն ունեն, բայց դրա զորությունն ուրանում են»:

80 Այս խեղճ, աննկատ կինը գիտեր, որ Նա Աստված է: Երբ այդ կուժը դատարկվում, դատարկվում, դատարկվում, դատարկվում էր, իրավիճակը գնալով

ավելի ու ավելի էր վատթարանում: Բայց Աստված թույլ էր տալիս, որ դա այդպես ընթանա: Նա պարզապես սիրում է դա անել: Նա սիրում է ձեր հավատքը փորձության ենթարկել, տեսնելու համար, թե ինչպես եք դրան արձագանքելու, թույլ է տալիս յուղով օծել և աղոթել ձեզ համար, հետո թույլ է տալիս, որ դուք ձեզ վատ զգաք: Ասում է. «Դե, Սատանա, ենթարկի՛ր նրան փորձության: Ես գիտեմ, որ նա հավատում է Ինձ»: Օրհնյալ լինի Աստված հավիտյան: Ո՛հ, Աստված իմ: Այժմ ենթարկի՛ր նրան փորձության: Ես գիտեմ, որ նա դրանում Իմ Խոսքն է ընդունելու»: Կարո՞ղ է Նա նույնն ասել ձեր մասին:

81 Նա դա ասաց Հոբի մասին: Ասաց. «Ինչ ուզում ես՝ արա՛ նրա հետ, բայց նրա կյանքին չդիպչես, որովհետև Ես գիտեմ, որ նա սիրում է Ինձ: Նա ողջակեզը մատուցել է: Պահանջները կատարել է: Նա Իմ ասածը արել է և նա հավատում է դրան: Հիմա գլորի՛ր նրան ածուխների վրայով, եթե ուզում ես»: Սատանան խլեց նրանից ամեն ինչ: Աստված դա կրկնապատկեց, երբ իր ունեցվածքը վերադարձրեց իրեն: Նա, անկասկած, կկրկնապատկի:

82 Նա մեր հավատքը փորձության է ենթարկում, որպեսզի տեսնի արդյոք մենք իսկապես հավատո՞ւմ ենք, որ Նա Աստված է:

83 Այդ աննկատ կինը, անկասկած, ասում էր. «Ես աղոթել եմ: Ես աղոթել եմ: Ես գիտեմ, որ ես անարժան մի հեթանոս եմ»:

84 Հիշո՞ւմ եք Հիսուսը նրա մասին խոսում էր Աստվածաշնչում: Նա ասաց. «Մի՞թե Եղիայի օրերում շատ որբևայրիներ չկային: Բայց նա միայն մեկի մոտ ուղարկվեց, և նա հեթանոս էր»:

85 «Հե՛յ,— նա ասաց,— խնդրում եմ»: Գուցե երբ նա այդ վերջին փոքրիկ նկանակին էր նայում, մահն արդեն անցել էր դարպասների միջով և ներս էր մտնում դոնով: Եվս մի կտոր և նա ու իր որդին կմահանային: Պատկերացնում եմ, թե ինչպես էր նա ամբողջ գիշեր աղոթում, փչում են տաք քամիները, գետիրը ճաքճքել է, և փողոցում մարդիկ լաց են լինում և աղաղակում են: Նա հետ ու առաջ է քայլում տան միջով: Նա հայացք է գցում իր փոքրիկ տղային: Նայում է իր փոքրիկ ննջազգեստին, դրանք մաշվել էին և նրա ոտքերը դուրս էին ցցվել: Նայում է իր կնճռոտ ձեռքերին: Նա հետ ու առաջ է քայլում, բայց ասում է. «Ես գիտեմ, որ Նա Աստված է: Ես իմ բոլոր դավանածներն արել եմ»: Ես ամեն բան արել եմ, ինչ Նա պահանջում է:

Ես խնդրում եմ մեր կյանքի փրկության համար, հանուն Նրա փառքի»: Աստված նրան տեսավ:

86 Մնացածը դրսում էին ժամանակ անցկացնում, և ինչ-որ տեղ պարում էին, զարդարում էին իրենց, մասնակցում էին ժամանակակից հեռուստաշոուներին կամ ինչ-որ բանով, տարված էին աշխարհիկ բաներով: Բայց այդ կինը մեկուսացել էր Աստծո հետ:

87 Լույսը բացվեց: Նա ասաց. «Փոքրիկս ամբողջ գիշեր սովից լաց է եղել: Ի՞նչ եմ անելու ես այս մի բուռ այլուրով»:

88 Դուք գիտեք, որ այդ այլուրը ներկայացնում էր Քրիստոսին: Աստվածաշունչն ուսումնասիրող ցանկացած մարդ գիտի, որ Հացի ընծան ներկայացնում է Քրիստոսին: Եվ այդ ընծան պետք է հատուկ աղացաքարի վրա աղվեր, մինչև յուրաքանչյուր փոքրիկ հացահատիկը նույն ձևով չաղվեր, որովհետև Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Եվ ամեն հավատացյալ հավատում է դրան և հիմնվում է սրա վրա: Ալելուիա՛: Բավարարվեք ձեր նեխահոտ սառը ֆորմալ կրոնով, որն ուզում եք: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես հավատում եմ, որ Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Ես հրապարակավ հայտարարում եմ իմ դիրքի մասին այս անաստվածների աշխարհում: Ես դեռ հավատում եմ, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

89 Այդ աղացաքարն ամեն մի մասկինը աղում էր նույն ձևով, որովհետև Նա նույնն է: Նա նույն Աստվածն է, ինչպես այն ժամանակ, նույնն է նաև հենց հիմա, այս առավոտ: Նա միշտ նույնն է մնալու: Ահա թե ինչ էր իրենից ներկայացնում այդ այլուրը:

90 Իսկ յուղը ներկայացնում է Հոգին, ինչպես մենք գիտենք ըստ Եզեկիելի 4-րդ գլխի և այլն: Դրա համար ենք մենք յուղով օծում, այն ներկայացնում է Հոգին: Ի՞նչ է սա: Ինչպես գրված է Հովհաննեսի Ավետարանի 4-րդ գլխում. «Հայրը փնտրում է Իրեն Հոգով և ճշմարտությամբ պաշտողներին»: Հիսուսն էր Ճշմարտությունը: Նա ներկայացնում էր Հացի ընծան, իսկ այս յուղը՝ Հոգին: Եվ Հոգին միախառնվելով Ճշմարտության հետ պետք է ինչ-որ բանի բերի: Խարնե՛ք այն իրար, ստացվելու է նկանակ: Օ՜հ

91 Ո՞ւր է ձեր հավատքը, երբ Աստծո Խոսքը քարոզվում է Իր պարզության մեջ, սակայն Իր զորությամբ, որ Հիսուս Քրստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, և

Խոսքը հնչում է այս Այյուրի տեսքով, և դուք պետք է Յուղն ունենաք իրար խառնելու համար: Դա կարող է ընդհամենը մի բուռ, կամ մի ճաշի գդալ չափով լինել, բայց, ինչ էլ որ կա, դա իրական է:

92 Այժմ, ի՞նչի է այն պատրաստ: Պատրաստ է խաչի համար: Պատրաստ է ինքնազոհության համար: Ահա թե ինչ պետք է անել: Եթե Խոսքը քարոզվել է, իսկ դու ունես Սուրբ Հոգին, և Այն խառնելու ես իրար, այս ինքնազոհությունն է տրորելու ամեն մի ցավ, տրորելու ամեն մի հիվանդություն, տրորելու ամեն ինչ, ինչ հակառակ է Աստծո Խոսքին և կանգնել դրա վրա:

93 Բժիշկը *այս, այն կամ այլ բաներ է* ասում. դա ոչ մի նշանակություն չունի: Կանգնե՛ք Դրա վրա, որովհետև Աստված է այդպես ասել: Այյուրն է եկել: Յուղն ունեք: Խառնե՛ք իրար:

94 Ահա կարծես մի ձայն եմ լսում: Քիչ առաջ է լույսը բացվել: Մի ձայն խոսում է և ասում. «Դո՛ւրս արի բակ և երկու կտոր փայտ վերցրո՛ւ»: Ուշադրություն դարձրեցի՞ք, Սուրբ Գիրքն ասում է. «Երկու կտոր փայտ»: Խաչը: Նա այյուրն ու յունը ուներ, բայց նա պետք է կանչվեր առաջ գնալու համար, այժմ գործելու՝ գործելու դրանով: Ինչքան էլ ունենաք, ինչքան Այյուր կամ Յուղ ունենաք, որքան ձեզ անհրաժեշտ է, բայց դուք պետք է գործեք. ինքնազոհություն:

95 Երկու կտոր փայտ: Հին ժամանակներում դա կրակ անելու լավագույն միջոց էր համարվում: Երբ փայտը վերցնում և դնում ես մյուս փայտի վրա, մեջտեղում կրակ ես անում, ծարյերը մոտեցնում ես կրակին: Հնդկացիներն այդպես են կրակ վառում: Ես էլ եմ վառել, հաճախ ողջ գիշերվա ընթացքում: Պարզապես մի փայտ ես վերցնում և *սա* այսպես, *մյուսն* այնպես ես դնում, և անընդատ ուղղակի հրում ես կրակի մեջ, երբ այն սկսում է այրվել:

96 Այդ փայտը ներկայացնում էր խաչը: «Երկու կտոր փայտ»,— ասում է Աստվածաշունչը: Ձայնն ասաց. «Շրջի՛ր բակով և եկրու կտոր փայտ վերցրու»: Միևնույն ժամանակ լեռներում մի ձայն որոտաց մարգարեին՝ ասելով. «Գնա՛ քաղաք: Ես հրաման եմ տվել»: Օ՛հ, Աստված իմ: Նրանք երկուսն էլ հնազանդվեցին: Պետք է ինչ-որ բան տեղի ունենա: Երկուսն էլ հնազանդվում են:

97 Եթե քարոզիչը քարոզում է Խոսքը, և Դա ընդունողը հավատում է Դրան, և գործում է Դրան համաձայն, պետք

է ինչ–որ բան տեղի ունենա: Եթե մեղավոր ես, դու պետք է փրկվես, եթե հիվանդ ես՝ բժշկվես, որովհետև Աստված է դա խոստացել, եթե մենք վստահ ենք Աստծո վրա:

98 Նույնքան վստահ, որքան Նա Աստված է, Նա պետք է Իր Խոսքը կատարի: Անշո՛ւշտ: Հրամանը հետևյալն էր. «Գնա՛ քաղաք, որովհետև այնտեղ որբևայրի մի կնոջ հրամայել եմ»: Մարգարեն տեսիլք տեսավ: Ահա նա գալիս է, քայլում է: Նա չգիտի, թե ուր է գնում. դա ոչ մի նշանակություն չունի: Նա պարզապես հնազանդվում է:

99 Կինը չգիտի, թե այդ փայտերը որտեղ են գտնվելու, բայց բակում՝ ինչ–որ տեղ երկու կտոր փայտ կա: Նա գործի է անցնում, բակ է դուրս գալիս, նայում է շուրջը. «Օ՛հ, ինչ շոգ է»: Քաղաքից լսվում են գոռոցներ, գիշերային կողոպտիչները գալիս են այնտեղ, կռվում են, հարբում են գինով և այլն: Կինը նայում է դեպի փողոց: Ոչինչ չի տեսնում: Գտնում է մի փայտի կտոր, խաչի մի մասը, ինքնազոհություն: Վերցնում է մյուս կտորը, փայտը: Եվ այն ժամանակ, երբ այդ երկրորդ փայտի կտորը բարձրացնում է...

100 Օ՛հ, ինչ հուսալքված պետք է որ լիներ, մահը թակում է դուռը: Նա իր որդու հետ միասին պետք է այդ բլիթից մի փոքրիկ կտոր ուտեին և դրանից հետո մեռնեին: Դա վերջն էր: Եվ երբեմն հենց վշտի մեջ է, որ լսում ենք այդ ձայնը:

101 Երբ այդ երկրորդ փայտի կտորը բարձրացրեց և ետ դարձավ, դռնակից մի ձայն հնչեց՝ ասելով. «Ինձ ամանով մի քիչ ջո՛ւր բեր»:

102 Նա շրջվեց, որ տեսնի, այդ երկու կտոր փայտը ձեռքին, յուղն ու այյուրն իրար խառնած և պատրաստի: Նա ասաց, որ դա արդեն պատրաստել, խառնել է իրար: Ահա թե ինչ, Խոսքն ու Հոգին պետք է խառնել իրար, դնել ինքնազոհության խաչի վրա, մերժել այն ամենը, ինչ հակառակ է քո խնդրանքին: Դա ճիշտ է: «Ես խառնել եմ այն, այժմ գնամ գտնելու այս փայտերը»:

Եվ այդ ձայնն ասաց. «Ինձ ամանով մի քիչ ջո՛ւր բեր»:

103 Նա նայեց և տեսավ փոս ընկած այտերով, մորուքով, ճաղատ գլխով մի մարդու կանգնած, դռնակին հենված, նա դռնակից նայում էր այն կողմ, մի կտոր ոչխարի մորթին շուրջը փաթաթած: Նա բարի արտաքինով ծեր ջենթլմենի տպավորություն էր թողնում:

104 Նա ասաց. «Ես իմ ջրից կբաժնեկցեմ նրա հետ»։ Կյանքի Ջուրը, դու ցանկանում ես այն տալ ամեն մեկին, պատմել ամեն մեկին, գնալ ուր էլ որ լինի։ «Մի րոպե, պարոն»։ Նա փայտերը ձեռքին հետ է գալիս։

105 Եվ այդ Ձայնը նորից որոտած. «Ոչ միայն քո ջրից բաժնեկցի՛ր, այլ ձեռքովդ մի պատառ էլ հաց բե՛ր ինձ»։ Կյանքի Հաց, կյանքի ջուր։ Իսկ կյա՞նքը։ Հենց դա վերջանա, նա մեռնելու է։ «Քո ջուրը բե՛ր ինձ ու քո հանցը բե՛ր ինձ»։

106 Ի՞նչ ենք մենք պարզում այստեղ։ Ի՞նչ դաս ենք մենք քաղում։ «Նախ փնտրե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ»։

«Մի քիչ ջուր և մի պատառ էլ հաց բե՛ր ինձ»։

107 Այդ ժամանակ նա վիատված շրջվում է։ Պատկերացնում եմ, թե ինչպես է նա ասում. «Պարո՛ն,— նման մի բան,— դու տարբերվում ես իմ տեսած և լսած տղամարդկանցից։ Դու կարծես այնքան վստահ ես քո ասածներին։ Բայց իմ ունեցած այյուրը ընդհամենը մի բուռ է և ունեմ ընդհամենը մի գդալ յուղ։ Ես այն արդեն խառնել եմ և հիմա պատրաստվում եմ թխել այս երկու փայտիկների վրա։ Եվ ես ուտելու եմ այն, ես և իմ տղան, ու դրանից հետո մեռնեմ։ Սա է այն ամենը, ինչ ես ունեմ»։

108 Ի՞նչ ենք լսում հաջորդիվ։ «Բայց նախ այդ փոքրիկ նկանակը բե՛ր ինձ»։ Առաջին հերթին Աստված։ Կարևոր չէ, թե ինչ-որ մեկը ինչ է ասում, էլ ինչ կարող է լինել, ինչ ապացույց, որքան մոայլ է այն թվում, ինչ էլ որ լինի առաջին հերթին Աստված։ Առաջին հերթին Իր Խոսքը։

109 «Բժիշկն ասում է, որ ես չեմ լավանա»։ Բայց առաջին հերթին Նրա Խոսքը։ «Ես չափազանց մեղավոր եմ։ Ես պոռնիկ եմ։ Ես խաղամոլ եմ։ Ես հարբեցող եմ»։

Առաջին հերթին Աստծո Խոսքը։ «Եթե նույնիսկ ձեր մեղքերը կարմրի պես լինեն, ձյան պես սպիտակ կդառնան. որդան կարմրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան»։ Առաջին հերթին Աստված։

110 «Գնա՛ նախ մի փոքրիկ նկանակ բե՛ր ինձ։ Այն ամենը, ինչ դու ունես, բե՛ր ինձ»։ Ցանկանո՞ւմ եք արդյոք հանձնել դա Նրա ձեռքերի մեջ։

111 Իմ կյանքը, այն, ինչ ես կամ։ Ես հիսուն տարեկան եմ։ Ցանկանո՞ւմ ես դու՝ Ուիլլիամ Բրանհամ, այն հանձնել Ինձ։ Ցանկանո՞ւմ եք դուք՝ փոքրիկներ հանձնել ձեր

կյանքը Ինձ: Ցանկանո՞ւմ եք: Կարո՞ղ եք դա անել հիվանդներ: Կարո՞ղ եք վստահել Ինձ: Առաջին հերթին դիր Ինձ»:

112 «Ձեռքովդ մի պատար հաց և մի քիչ էլ ջուր բե՛ր ինձ»: Այդ կինը նայեց նրան: Ինչ-որ բան նրան ասել էր, որ այդ մարդը գիտեր, թե ինչի է խոսում:

Աստված իրեններին ճանաչում է: «Ոչխարներ...Իմ ոչխարներն Իմ ձայնը ճանաչում են: Նրանք գիտեն արդյո՞ք դա Սուրբ Գրքի համաձա՞յն է, թե՞ ոչ, արդյոք դա ճի՞շտ է, թե՞ ոչ»:

113 Նա հնազանդությամբ է շրջվում: Ահա թե ինչ դուք պետք է անեք: Եվ երբ նա շրջվեց՝ մարգարեի ասածին հնազանդվելու համար, այդժամ երկնքից մի որոտ հնչեց, որը ամեն մարդ ակնկալում է լսել: Որովհետև այդ որոտը մարգարեի բերանից հնչեց, որն ամեն մեղավոր և ամեն հիվանդ փափագում է լսել. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»:

114 Ինչպես ենք մենք փափագում լսել Այն: Ինչպես այն մարդիկ, ովքեր նստում են իմ տան առջևի ճանապարհին, ասում են. «Մոտեցի՛ր այս դռանը: Աղջիկս *այսպիսի* վիճակում է: Իմ երեխան, օ՝հ, այնքան վատ է: Միայն մեկ խոսք ասա՛»: Ինչպե՞ս կարող ես դա ասել, մինչև այն չհայտնվի քո բերանում: Դու դա քեզնից կասես: Բայց նրանք փափագում են դա լսել՝ «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքը:

115 Ահա այն ցանկապատից հնչեց, նրա հնազանդության շնորհիվ: Եվ հուսահատությունը անհետացավ. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. Կարասը չի դատարկվելու ու կուժը չի չորանալու, մինչև այն օրը, երբ Տեր Աստվածը երկրի վրա անձրև տա: Օ՛հ, ինչ մխիթարություն է:

116 Նա նկանակը պատրաստեց, տվեց այն մարգարեին: Հետո վերադարձավ և պատրաստեց իր և տղայի համար: Եվ նրանք ուտում և խմում էին առատորեն երկրի վրա:

117 Այդ որտեղի՞ց այն հայտնվեց: Ինչպե՞ս այն հայտնվեց այնտեղ: Գիտականորեն ասացեք ինձ, որտեղի՞ց էր այդ այյուրն ի հայտ գալիս: Որտեղի՞ց այդ յուղը հայտնվեց: Ինչպե՞ս էր այն հայտնվում այդ կուժի մեջ: Նա ամեն առավոտ դատարկում էր այն: Նա ամեն առավոտ այյուրի կարասը դատարկում էր, և այն դատարկ էր, բայց երբ գնում էր էլի բերելու, այն այնտեղ էր: Որտեղի՞ց էր այն այնտեղ էր: Ընդունե՛ք Աստծուն Նրա Խոսքի համաձայն: Աստծո վրա վստահ եղեք: Նա է Արարիչը:

118 Գուցե դուք կորցրել եք ձեր առողջությունը: Գուցե կորցրել եք ձեր հաղորդակցությունը: Ընդունե՛ք Նրան Իր Խոսքի համաձայն: Վստահ եղեք, որ Նա Աստված է: Կյանքի մռայլ պահերը, որոնք այդպիսին են թվում հիմա, կարող են այդպես մռայլ չթվալ, եթե պարզապես ընդունեք Նրա Խոսքը և վստահ լինեք, որ Նա Աստված է:

119 Մի անգամ Գերմանիայում մի կտավ տեսա, որը երբեք չեմ մոռանա: Գերմանացի մի նկարիչ նկարել էր...մի կտավ, որը, որը կոչվում էր «Ամպերի երկիր»: Երբ հեռվից նայում ես այդ նկարին, թվում է, թե նման թաղիծ կյանքում երբեք չես տեսել: Ուղղակի ամպերի մի կուտակում է, երբ շատ հեռվից ես դրան նայում: Բայց երբ նկարին շատ ես մոտիկ գալիս, պատկերն անմիջապես փոխվում է: Դա ծափ զարկող հրեշտակների թևերն են, ովքեր Տիրոջն երգում են ալելույա: Այնպես որ ահա թե ինչ է երբեմն իրենից ներկայացնում թախիծը: Եթե շատ հեռվից ես դրան նայում, այն մռայլ ու թաղծոտ տեսք ունի: Բայց ընդունի՛ր Աստծուն Իր Խոսքի համաձայն և վստահ եղի՛ր, որ Նա Աստված է, և մոտ արի դրան, և դու կտեսնես, որ դա պարզապես Հրեշտակների ծափ տվող թևերն են:

120 Նա ինչ-որ չափով նման էր Աբրահամին, հրամայված էր տալ այն ամենը, ինչ նա ուներ, դնել այն ինքնազոհության զոհասեղանի վրա: Գուցե ձեզ էլ են նույն բանի համար կանչում այս առավոտ: Հրաժարվե՛ք ձեր սովորություններից: Հրաժարվե՛ք ձեր անհավատությունից: Հրաժարվե՛ք այն ամենից, ինչ դուք ունեք: Այնուհետև վերցրե՛ք Յուղն ու Խոսքը և խառնե՛ք իրար և դրե՛ք ինքնազոհության զոհասեղանի վրա: Կտեսնեք, որ Դա ասպարեզ է կանչելու Աստծուն, դա նույնքան ճիշտ է, որքան որ ես կանգնած եմ այս ամբիոնի առջև:

Խորհե՛ք դրա շուրջ, մինչ աղոթելու ենք:

121 Ունե՞ք որևէ բանի կարիքն այսօր: Ձեր կարիքը վե՞ր է ձեր ֆիզիկական կարողություններից: Գուցե գումարն այնքան քիչ է, որ վարձավճարը չե՞ք կարող վճարել, գուցե երեխաները նոր կոշիկ են ուզում, իսկ դուք գումար չունե՞ք դրանք գնելու համար: Տանը կարասը դատարկ և կուժը չորանալու վրա է: Չե՞ս կարող կեր գնել անասունների համար: Եվ ինչ-որ բան այնպես չէ՞: Հիշե՛ք, Նա խոստում է տվել:

122 Հիվանդ եք, և բժիշկն ասում է, որ դուք վիրահատության կարիք ունե՞ք, իսկ դուք գումար չունե՞ք

վիրահատություն կատարելու համար: Դուք կաիրք ունեք:

123 Մեղավոր ե՞ս, կարիքդ մե՞ծ է, գիտենալով, որ եթե Աստված այսօր չկանչեր, դու կկորչեիր: Ուխտադրո՞ւժ ես, ով փախչում է Աստծուց: Եվ դու գիտես, որ ինչ–որ եկեղեցուն ես պատկանում, բայց նաև գիտես, որ դու իրավացի չես: Քո սեփական խիղճը քեզ ասում է, Խոսքի համաձայն, որ դու իրավացի չես: Եվ դու ինչ–որ կարիք ունես: Մի՛ թողեք, որպեսզի այս խոսքերը ընկնեն փշոտ տեղերում, կամ քարերի, քարացած սրտերի մեջ, թող նրանք ընկնեն լավ, պարարտ հողի մեջ:

124 Եթե դու հիվանդ ես և դու…բժիշկն ասում է, որ չես կարող լավանալ, և դու ուխտ ես անում Աստծո առջև, որ ծառայելու ես Նրան քո կյանքիդ մնացած օրերում, և դու վստահ ես, որ Նա Աստված է, եկել ես Նրա պահանջը կատարելու: Եթե ինչ–որ բանի կարիք ունես, նախ կանես այսքանը՝ կբարձրացնե՞ս քո ձեռքը Աստծուն, դրանով հայտնելով, որ դու ինչ–որ բանի կարիք ունես: Աստված օրհնի քեզ:

Աղոթենք:

125 Ո՛վ Տեր, ճիշտ այնպես վստահ, ինչպես ես այսօր առավոտ կանգնած եմ այս ամբիոնի առջև, ես գիտեմ, որ ոչ մի ձեռք չէր բարձրացվի առանց Քո գիտության, որովհետև Դու Աստված ես: Դու ես ասել. «Մի՞թե երկու դահեկանով չեն վաճառվում ճնճղուկները, որքա՛ն ավելի թանկ եք դուք ճնճղուկից»: Որքան ավելին դու տեսնում ես այդ մահկանացուների ձեռքերը, որոնց համար Քո Որդին՝ Հիսուսն է մահացել: Որքան ավելի Դու տեսնում ես նրանց ձեռքերը, քան կտեսնեիր ճնճղուկին, եթե այս առավոտ նա ընկներ: Կարծում եմ, որ…այսօր տասներկու ճնճղուկ չէր վաճառվի մի պեննիով, որովհետև դրանք ոչ ոքի պետք չեն: Խնդիր կառաջանար դրանց թաղելու համար: Բայց Դու նրանցից ամեն մեկին գիտես, գիտես ամեն փետուրը, որ նրանց մարմնի վրա է: Մեր գլխի ամեն մազը գիտես:

126 Ո՛վ Տե՛ր, պատասխանի՛ր աղոթքին: Թող նրանք վստահ լինեն այս առավոտ, որ Դու Աստված ես, և Սա Քո Հոգին է: Թող այս ժամանակակից կրոնի փայլն ու անորոշությունը հեռանա իրենցից, որ ասում են. «Օ՛հ, ես *այս ինչ* եկեղեցուն եմ պատկանում»: Տե՛ր, թող այս ամենը հենց հիմա հեռանա նրանց մտքերից: Թող այս մի վայրկյանում մի պահ տեսնեն հավիտենական կյանքը:

Այդժամ նրանք փնտրելու են և փափագելու են Դրան, գիտակցելով, թե ով է Աստված, և նրանք վստահ են լինելու, որ Նա կա: Նա իր Խոսքը պահում է:

127 Ինչ վերաբերում է մեղավորներին, թող նրանք արագ ապաշխարեն և պատրաստվեն մկրտության համար Հիսուս Քրիստոսի Անունով: Եվ Դու խոստացել ես, որ կտաս նրանց Սուրբ Հոգին: Դու ես ասել դա, Տե՛ր: Դու Քո խոստումը պահում ես:

128 Եթե այստեղ կան ուխտադրուժներ, որոնք վստահ է, որ Դու Աստված ես, և նրանք հեռացել են Քեզանից, թող այսօր գան, քանի որ Դու ես ասել. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմրի պես լինեն, ձյան պես սպիտակ պիտի լինեն. եթե որդան կարմրի պես լինեն, բրդի պես սպիտակ պիտի դառնան»:

129 Եվ եթե այստեղ հիվանդներ կան, թող գիտակցեն, որ Դու Աստված ես: Դու Քո Խոսքը պահում ես: Դու պետք է Քո Խոսքը պահես: Որովհետև նրանք տալիս են իրենց անձը, իրենց Յուղի հետ միասին, Հոգին, որը նրանցում է, որը վկայում է, որ նրանք հավատում են: Իսկ հետո, Խոսքի հետ միասին, Կյանքի Հացը, որ առաջ եկավ՝ Քրիստոսը. աղացած նրանց համար Հին և Նոր Կտակարանում, ցույց տալու, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Թող նրանք այդ Խոսքը խառնեն Յուղի հետ, Հոգու, որ նրանք ունեն, այնուհետև կանգնեն զոհասեղանի առջև՝ ասելով. «Սա է այն ամենը, ինչ ես ունեմ, Տե՛ր: Ես այն բերում եմ»:

Օ՜հ, որքան ես Դու բազմացնելու: Ինչպե՜ս է դա պատմական Աստծուն ասպարեզ կանչելու: Ինչպե՜ս է դա ստիպելու Եհովային բարձրանալ սփոփված սրտով՝ «Ես զավակ ունեմ, որ հնազանդվելու է Ինձ: Ես փորձության ենթարկեցի նրան, և նա ապացուցեց, որ սիրում և հավատում է Ինձ: Նա վստահ է, որ Ես կամ»: Չէ որ ասվում է. «Աստծուն մոտեցողը նախ պետք է հավատա, թե Աստված կա, և Նա վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին»: Ծնորհի՛ր այս ժամին, երբ մենք դա Քեզ ենք հանձնում:

130 Եվ, հիմա, մինչ խոնարհել ենք մեր գլուխները, և նրանք, ովքեր ինչ–որ բանի կարիք ունեն, ոտքի կանգնեք, ովքեր ուզում են...Եվ այսպես, եթե դուք վստահ չեք, որ Նա Աստված է...Եթե վստահ եք, որ Նա Աստած է, որ Նա փրկության, բժշկության վերաբերյալ, ինչ էլ որ լինի Իր խոստումը պահում է, եթե վստահ եք, որ Նա Աստված է, կանգնե՛ք: Եթե դուք ունեք ևս մեկին, ում

համար ցանկանում եք աղոթել, կանգնե՛ք: Եթե դուք... Եթե դուք վստահ եք, որ Նա Աստված է, հայտնեք ձեր խնդրանքը սուրբերի ժողովում: Դուք դա կանեք, կանգնելով...[Դադար ժապավենի վրա: Ծան. Խմբ.]:

«Ես վստահ եմ, որ Նա Աստված է: Ես հավատում եմ, որ Նա պահում է Իր Խոսքը: Եվ ես վստահ եմ, որ իմ խնդրանքը...Ես հենց հիմա կդնեմ դա Աստծո Արյան ներքո»: Արե՛ք դա, դրե՛ք ամեն մեղք, ամեն... Մեղքը անհավատությունն է: Դու կարող ես եկեղեցու անդամ լինել, բայց ես մեղք ասելով ի նկատի ունեմ քո «անհավատությունը»: Դուք դա որպես զոհ եք դնում: Դուք պետք է դա զոհաբերեք: Դուք գալիս եք խաչին մոտ: Դու հիմա զոհաբերելու ես քո ամբողջ անհավատությունը: Եվ հանձնի՛ր այն Նրան, և իմացի, որ Նա կա, և, որ դու վստահ ես, որ Նա պատասխանելու է: Եթե դու այդպիսին ես, բարձրացրո՛ւ քո ձեռքը: Մնա՛ այդպիսին:

131 Տե՛ր, Դու Աստված ես: Ահա նրանց Յուղն ու նրանց Ցորենն իրար խառնած: Նրանք Դա բերում եմ խաչի մոտ, որտեղ Աստծո Կրակը վայր է իջնելու է սրտերի մեջ (եթե նրանք իսկապես դա ի նկատի ունեն) և սպառելու է այդ զոհը: Դու դուրս ես գալու ասպարեզ, խառնելու ես և հանդարտեցնելու ես ջուրը, Երկնքից ցած ես իջնելու Կրակե կառքով: Ամբողջ երկինքն ու երկիրը կցնցես՝ իրենց վարձահատույց լինելու համար:

132 Մինչ նրանք կանգնած են՝ բազուկները վեր պարզած, ցույց տալով, որ հավատում են և Քո զոհասեղանի վրա են դրել իրենց անձը, ամեն խնդրանքը, որ նրանք ունեն: Ո՛վ Երկնքի և երկրի Աստված, Երկնքի և երկրի Դատավոր, անշուշտ, երկնքի և երկրի Դատավորը արդարություն է գործելու: Նա, անշուշտ, Իր Խոսքը պահելու է, Դու, որ գիտես տղամարդկանց սրտերը, կանանց սրտերը, այս մարդկանց սրտերը:

133 Տե՛ր Աստված, ես էլ եմ բարձրացնում իմ ձեռքերը, որովհետև գիտեմ, որ պետք է փոխեմ ծառայությունս: Ես հավատում եմ, որ Դու կաս: Ես տեսել եմ Քեզ կանգնած Կրակի Սյունի մեջ: Տեսել եմ, թե ինչես ես քննում մարդկանց սրտի խորհուրդները: Դու ոչ մի անգամ չես վրիպել: Դու դա խոստացար, երբ դա արեցիր այստեղ՝ փողոցի մյուս ծայրում, երբ Դու առաջին անգամ սկսեցիր այդ ձևով գործել: Եվ Դու ինձ պաշտպանել ես ամբողջ

աշխարհում, և նորից ու նորից։ Ես վստահ եմ, որ Դու Աստված ես։ Ես դրանում վստահ եմ։

134 Ես իմ անձը այս մարդկանց հետ միասին արաջարկում եմ Քեզ և զոհաբերում եմ Քեզ այն ամենը, ինչ ես ունեմ, Տե՛ր, ծառայության համար։ Ես նորից, Տե՛ր, ճամփոդություն եմ սկսում ամբողջ աշխարհով մեկ։ Օգնի՛ր ինձ, ով Տեր։ Եթե երբևէ չեմ հավատացել Քեզ, ների՛ր իմ մեղքերը։ Ների՛ր իմ անհավատությունը։ Ես գիտեմ, որ Դու կաս, և վարձահատույց ես լինում Քեզ փնտրողներին։

135 Նույնպես ես այս առավոտ խոստովանում եմ իմ ժողովրդի մեղքերը, նրանց տկարությունները, նրանց կասկածները, մինչ նրանք կանգնած են իրենց ձեռքերը դեպի վեր պարզած։ Ես խոստովանում եմ նրանց մեղքերը, Տե՛ր, և մեր բոլոր տկարությունները։ Ուղարկիր Սուրբ Հոգին մեզ վրա, Քո հաստատման կնիքով, որ Դու Աստված ես։ Եվ Դու հիմա այստեղ ես մեզ ընդունելու, մեզ Քո գիրկն առնելու և մեզ համար փրկագնելու այն ամենը, ինչ մենք կորցրել ենք։ Եթե դա մեր առողջության հետ է կապված, թող հարյուրապատիկ վերականգնվի, եթե դա մեր հոգու հետ է կապված, թող այն մեզ վերադառնա որպես ծաղկած փայլուն ծաղիկ՝ Սուրբ Հոգով լցված, Աստծո առջև ներկայացնելու համար։ Եթե դա անհավատությունն է, թող մեզ վերադառնա, Տե՛ր, լեռներ տեղափոխող հավատքով։ Շնորհի՛ր այդ, Տե՛ր։

136 Մենք հավատում ենք, որ Դու գործում ես, Սուրբ Հոգին տիրում է այս շենքը, այս մարդկանց և նրանց սրտերը՝ մղելով ընդունել կենդանի Աստծուն։ Մենք սա անում ենք Հիսուս Քրիստոսի Անունով։

Հավատքս Քեզ է նայում,
Ով Գառ Գողգոթայի,
Փրկիչ Աստվածային,
Լսիր աղոթքս հիմա,
Մեղքերս ջնջիր,
Մի՛ թույլ տուր
Քեզանից հեռանամ։

137 Դուք իսկապես դա ի նկատի ունե՞ք։ Ընդունո՞ւմ եք դա։ Բարձրացրե՛ք ձեր ձեռքը, ասե՛ք. «Այժմ ես ընդունում եմ դա։ Ես հավատում եմ Նրան»։

Երբ կյանքի մութ բավիղ մտնեմ,
Ու ցավերս շատանան,

Դու եղիր Առաջնորդս.
Խավարս լույս դարձրու,
Վախերս հեռացրու,
Մի՛ թույլ տուր
Քեզանից հեռանամ:

Խոնարհենք մեր գլուխները:

138 Այս խիստ, դաժան պատգամից հետո, կոշտ, և կոպիտ ձևով բերված, բայց դա Ճշմարտություն է: Եվ եթե դուք հեզությամբ հավատում եք, որ կստանաք այն, ինչ խնդրել եք, երբեք թույլ մի տվեք, որ ինչ-որ բան ձեզ շեղի այդ ճիշտ ճանապարհից՝ մնացեք այնտեղ: Կարևոր չէ, թե որքան եմ ես քարոզում, ինչ եմ անում, կամ որևէ մեկն ինչ է անելու, դա ոչ մի արդյունք չի ունենա, մինչև դա չնդունեք որպես ձեր անձնական սեփականություն:

139 Եթե ձեր ողջ սրտով եք հավատում այն ամենին, ինչ խնդրել եք, եթե ձեր մեղքերը խոստովանել եք, ապա Աստված ներել է ձեզ: Այլևս դրանում չկասկածեք: Եթե դուք հեռացել եք Աստծուց, Նա այս առավոտ ձեզ ետ է ընդունել: Եթե Սուրբ Հոգու կարիքը ունեք, ապա մկրտվեք Հիսուս Քրիստոսի Անունով՝ մեղքերի թողության համար: Դա Աստծո Խոսքն է: Նա չի փոխելու դա ոչ մի եկեղեցու, ոչ մի կազմակերպության և ոչ ոքի համար: Դա պետք է մնա այդպես, ինչպես կա: Մենք պետք է համապատասխանենք Նրա պահանջներին, ոչ թե ինչ-որ եկեղեցու պահանջներին, այլ Նրա պահանջներին: Ահա թե ինչ մենք պետք է անենք:

140 Նա ասաց. «Հավատով արված աղոթքը պիտի փրկի հիվանդին»: Եթե դու հիվանդ ես, ես հավատքով աղոթեցի քեզ համար: Դու քո սրտում աղոթել ես: Եվ հավատա՛ դրան, ընդունի՛ր դա, ամուր կանգի՛ր դրա վրա: Ահա թե ինչպես դա պետք է լինի: Ոչինչ չի կարող խլել այն, կապ չունի, թե որքան դա մռայլ տեսք ունի:

141 Դուք կասեք. «Դե, եթե պարզվի, որ դեռ հիվանդ եմ»: Դա չ...Դա պարզապես հրեշտակների հավաքած թևերն են: Ահա և վերջ: Սա Աստված է օրհնության տեսքով: Այն մռայլ է թվում քեզ: Մի քիչ ավելի մոտ ե՛կ և նորից նայիր դրան, նայի՛ր, արդյո՞ք դա Աստված չէ այնտեղ կանգնած, կատարելով Իր Խոսքը:

142 Այժմ մինչ մեր գլուխները խոնարհած են, ես ծառայությունը հանձնելու եմ մեր հովվին՝ Նեվիլ եղբորը:

59-0125 ԱՍՏԾՈ ՎՐԱ ՎՍՏԱՀ ԵՂԵՔ
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org